ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ/ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Global Resource for Anti-Corruption Education and Youth Empowerment - Հակակոռուպցիոն կրթության և երիտասարդության հզորացման համաշխարհային ռեսուրս

«Հակակոռուպցիոն կրթություն և երիտասարդության հզորացման համաշխարհային ռեսուրսը» միջազգային փորձի լավագույն հարթակ է, որի հետ ձևավորվել է համագործակցային միջավայր և պատրաստակամություն՝ աջակցելու Հայաստանում կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերի կազմմանը և արդիականացմանը: Հարթակը հասնելի է անգլերեն և ռուսերեն լեզուներով, որտեղ դասավանդողները կարող են գտնել ուսումնաօժանդակ նյութեր՝ տեսանյութեր, խաղեր, մանկավարժների համար նախատեսված ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն: Այսպես.

- «2021 թվականի հունիսին Կոռուպցիայի դեմ պայքարի Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջանում ընդունված քաղաքական հռչակագիրը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման և հակազդման հիմք դնում է հակակոռուպցիոն կրթությունը և վերապատրաստումը՝ խթանելու թափանցիկություն, հաշվետվողականություն, բարեվարքություն և կոռուպցիան մերժելու մշակույթ: Հռչակագիրը հանձնարարում է Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակին (UNODC) բարձրացնել կոռուպցիայի կանխարգելման և հակազդման վերաբերյալ հանրային իրազեկվածությունը և գիտելիքները:

- Հիմնվելով «Կրթություն հանուն արդարադատության» (E4J) և «Հակակոռուպցիոն ակադեմիական» (ACAD) նախաձեռնությունների հաջողության վրա, որոնք համաշխարհային ճանաչում են ձեռք բերել անդամ պետություններում շահառուներին աջակցելու համար իրենց հավելյալ արժեքով, UNODC գործարկում է «Հակակոռուպցիոն կրթության և երիտասարդության համաշխարհային ռեսուրս» նախաձեռնությունը՝ https://grace.unodc.org/grace/ru/index.html, խթանելու կրթության և երիտասարդության հզորացման դերը կոռուպցիայի կանխարգելման և հակազդման գործում:
- GRACE նախաձեռնությունը միջազգային հանրությանը կբերի գիտելիքներ և փորձ՝ աշխատելով մանկավարժների, գիտնականների, երիտասարդության և հակակոռուպցիոն մարմինների հետ՝ խթանելու կոռուպցիան մերժելու մշակույթը:
- GRACE նախաձեռնության 3 հենասյուներն են.

1. Տարրական/նախնական և միջնակարգ կրթություն՝ https://grace.unodc.org/grace/en/primary-and-secondary.html, հիմնական նպատակներից են.
   - Բարելավել նախնական և միջին կրթական հաստատությունների կարողությունները հակակոռուպցիոն, բարեվարքություն և էթիկա ուսուցանելու համար՝ համապատասխան կրթական և վերապատրաստման նյութերի համատեքստում:
   - Աշխատել ազգային կրթական և հակակոռուպցիոն մարմինների հետ՝ բարձրացնելու արժեքների վրա հիմնված և հակակոռուպցիոն կրթության կարևորության վերաբերյալ իրազեկվածությունը՝ վերապատրաստման, երկխոսության, ֆորումների և արշավների միջոցով:
2. Ակադեմիա և հետազոտություն՝ https://grace.unodc.org/grace/en/academia-and-research.html, հիմնական նպատակներն են,

- Նպաստել գիտելիքի և լավագույն փորձի փոխանակմանը հակակոռուպցիոն, էթիկայի և բարեվարքության վերաբերյալ կրթության և հետազոտությունների ոլորտներում:
- Բարձրացնել հաստատությունների կարողությունները՝ ուսուցանելու և իրականացնելու հակակոռուպցիոն, էթիկայի և բարեվարքության վերաբերյալ հետազոտություններ:
- Աջակցել երիտասարդ մասնագետներին և հետազոտողներին, ովքեր աշխատում են հակակոռուպցիոն, էթիկայի և բարեվարքության ոլորտներում՝ բարձրացնելով նրանց կարողությունները, գիտելիքները և հմտությունները կոռուպցիայի կանխարգելման և պայքարի համար:
- Մշակել նոր մոդուլներ և խրախուսել հետազոտությունը զարգացող թեմաների շուրջ, ինչպիսիք են էթիկան և արհեստական ինտելեկտը:
- Ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարող փորձագետների մի խումբ՝ ամուր ակադեմիական հիմքով, որը կարող է նպաստել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի արդյունավետ իրականացմանը իրենց երկրներում և տարածաշրջաններում:

3. Երիտասարդների հզորացում՝

https://grace.unodc.org/grace/en/youth-empowerment.html, հիմնական նպատակներն են.

   - Խթանել երիտասարդների դերը՝ որպես փոփոխությունների առաջնորդներ և հզորացնել նրանց կարողությունները հակազդելու կոռուպցիային՝ նորարարության, տեխնոլոգիաների և սոցիալական ձեռներեցության միջոցով:

- Հիմնել երիտասարդների խորհրդատվական խորհուրդ՝ ապահովելու համար, որ իրականացվող աշխատանքը համապատասխան լինի «Ոչինչ մեր մասին՝ առանց մեր» սկզբունքին, և ապահովել երիտասարդների մասնակցությունը բոլոր մակարդակներում:
- Կազմակերպել գլոբալ երկխոսություններ՝ բարձրացնելու երիտասարդների դերը կոռուպցիայի դեմ պայքարում իրազեկվածությունը:

2. Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիա

Հանձնաժողովի կողմից զգալի աշխատանքներ են տարվել հակակոռուպցիոն կրթության գործում միջազգային մեծ հեղինակություն ունեցող Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի (International Anti-Corruption Academy (IACA) հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: 2022 թվականի մարտի 29-ին ստորագրված համագործակցության հուշագրով ամրագրվել է Հանձնաժողովի և IACA հետ համագործակցությունը, որը նոր խթան է հանդիսացել երկու կառույցների համագործակցության համար:

Փոխըմբռնման հուշագրով Հանձնաժողովը և Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիան ամրագրել են, որ հասարակությունների անվտանգությանն ու կայունությանը սպառնացող կոռուպցիոն վտանգները կանխարգելելն առավել տեսանելի կլինեն համատեղ ջանքերի և միջազգային համագործակցության արդյունքում:

Ամբողջական ուսումնական ծրագրերը վերաբերում են առարկաների լայն շրջանակին և սպասարկում են աշխարհի տարբեր տարածաշրջաններ, իսկ շրջանավարտների ցանցը ապահովում է լավագույն փորձի շարունակական փոխանակում, տեխնիկական աջակցություն և նորագույն գիտելիքներ: IACA-ն շրջանավարտներին ընկալում է որպես դեսպաններ և համաշխարհային հակակոռուպցիոն դաշինքի մաս:

Հիմնական առաքելությունն է ապահովել և դյուրացնել հակակոռուպցիոն կրթությունն ու վերապատրաստումը բոլոր ոլորտների մասնագետների և պրակտիկ աշխատողների համար: Տրամադրում է հետազոտություններ և հարթակներ երկխոսության համար, որոնք դաշտի մասնագետներին համախմբելով թույլ են տալիս հիմնավորված, կայուն ռազմավարություններ և ուղեցույցներ մշակել: